

Ղազարապետ Զար-
դեմյան վե ճումաս իրքեսի կիւն-
իքի բապ օրսնուր ԳՐԶ
Յենեկիկի պուրա իջին բեշին 60
Արք ալիքը 35
Յենեկիկի բեշին բաշրա իջին 85
Արք ալիքը 45
Բօսրա իւնիքի պիզի ալիս տիւր
90 դուշուգ բօսրա բուլու 80
դրաշա գապուլ օրսնուր
15 կիւնիք ցիսիս 60 բր. տըր.

ՄԵԶՄՈՒՄԻ

30 րաւա

ԱԷՊԱՆ

30 րաւա

مجموعة اخبار
لك اوغل بقم جادى ٧٥
DIRECTION
DU JOURNAL
MEDJMOUA-I-AHBAR
Grand Rue de Pére. 65

Ղազարապետ միւթեալիք խոստումաթ իշին Յ. ԹՕԼԱՅԵԱՆ աւարտաթ օրսնուր Խոստումաթ Ղազարապետ ճատումի քեպիքաթ Ն. 65

ԱՍԻԹԱՆԷ 29 ՅՈՒՐԻՍ

ԳՆԱՎԱՍՏԱԿԱՆ

ՅՄԱՌԱՅԵԱՆԲ ԵՒ ԻՐԵՆՑ ԲԱՐԵԿԱՄԱՆԵՐԸ

Որչափ և յարգելի ու նուիրական լինին սրբոց ձայներն, կաթուղիկէ մարդկութեան համար առաւել պարտաւորիչ և առաւել վճռական ձայն մը կայ աշխարհի վրայ, - Գրիստոսի փոխանորդին ձայնն է այն:

Եթէ Ս. Քահանայապետք որք անքուն կը հսկեն Գրիստոսի հօտին վրայ, որք չեն դադրիր ճշմարտութեան և արդարութեան ուղին մատնանիլ ընելէ յար, որք ամենէն անհայտ ու անողոք հակառակորդն են յարին ու անօրէնութեան, որք աստուածազօր վրէժխնդիրն են հաւատոյ և բարոյականի, որք առաջին բողոքիչներն են ընդդէմ ամենազգի զեղծմանց և մահաբոյր սկզբանց, որոց վեհաշունչ ձայնն չէ երբեք լռած ոչ թաղակիր զլուխներու և ոչ խաչադարձ կուրծքերու առջեւ, ոչ դատապարտութեան շանթերն չեն խնայած ոչ մեծաշուք անուաններն և ոչ հանճարալիր ճակատներն, և որոց սուրի հնար է բերաւոր առաքիւնութիւններ անտեսել քան մի միակ ոճիր նուազործել, եթէ, կ'ըսեմք, Ս. Քահանայապետք հաստատած, ներբողած ու պաշտպանած են Յիսուսի լնկերութիւնն, բացարձակ ճշմարտութիւն է թէ այդ լնկերութիւնն ոչ միայն դատապարտելի ու փաստակար չէ, այլ և օգտաւատ, բարեգործ, գերազնիւ ու վերկարար հաստատութիւն մ'է այն:

Արդ կը բաւէ ունենալ ամենավտիտ ծանօթութիւն մը եկեղեցական Պատմութեան տեսնելու համար թէ եղած է երբեք կրօնաւորական ուխտ մը որ առաւել արժանացած լինի քահանայապետական գնահատմանց, գովեստից, շնորհակալեաց և աւելի եռանդազին պաշտպանութեան քան Յիսուսեանց Միաբանութիւնն:

Նախ բազմաթիւ համառօտագիրներով, կոնդակներով և ահմանադրութեամբք զանազան Քահանայապետք այլ և այլ առիթներու մէջ հաճած են ցուցնել նոցա իւրեանց սէրն և վստահութիւնն: Բայ աստի նոյն լնկերութեան անգամներէ չափեր սրբոց կարգը բարձրացնելով, - ինչ որ անտարակոյս ամենէն գերաստիճան պատիւն է որուն երբեք կարենայ յերկրի արժանանալ մահկանացու կամ լաւ եւս անմահ ոք, -

հուշակած են բովանդակ աշխարհի թէ մարդկութեան գերբնախն անգամներն, եկեղեցւոյ փառապանծ դիւցազունքն են նոքա:

Պատմական ճշգրտութեան հաւատարիմ մնալու համար կը դնենք հոս նոցա թիւն:

93 սուրբք կամ երանելիք

93 յարգելիք

190 յորոց 137 մարտիրոսք և 33 խոստովանողք:

Անոնք որ գիտեն թէ ո՞րքան խոտաբաստ քննութիւններէ, ո՞րքան անաչառ և երկար հարցաքննութիւններէ, ո՞րչափ մանրադիւն և յամր գործողութիւններէ վերջը միայն կը հաճի Առաքելական Ս. Աթոռն շնորհել իւր նպատաւոր վրձնիւն, պիտի հասկնան թէ ո՞րչափ մեծ պատիւ է Միաբանութեան մը պապիսի գերազանց չքնադատ հոգիներ ծնանիլ հարիւրներով:

Գալով քահանայապետական այն մեծարանաց որք ոչ թէ մասնաւոր Յիսուսեանի մը յատուկ են, այլ ընդհանուր Յիսուսեանց, ամբողջ լնկերութեան, սորա ոգւոյն, կանոնաց, նպատակին, միջոցներուն ու արդեանց, ի՞նչ շքեղ և բազմապատիկ վկայութիւններ չպիտի կրնայինք յառաջ բերել Պօղոս Գ-է սկսեալ որ առաջին հաստատողն եղաւ Յիսուսի լնկերութեան, և որոյ համար Յիսուսեանք Աստուծոյ հոգւով լցեալ մարդիկ էին, մինչեւ Լեւոն ԺԳ. որ աշակերտ եղած է նոցա և որ կը յայտարարէր հայրական ուրախութեամբ թէ «Պապ պետք է լինել գիտնալու համար բոլոր այն բարիքն զոր կը գործեն Յիսուսեանք բովանդակ աշխարհի մէջ»:

Յուլիոս Գ. գերադոյն Քահանայապետն կ'սքանչանար նոցա աւետարանական խոնարհութեան, բողոշունչ եռանդեան, գիտութեան և չիւնիլ օրինակներուն վրայ, որովք կ'աշխատէին անխոնջ ի փառս Աստուծոյ և յօգուտ մարդկութեան:

Մարկէս Բ. այն ինչ բարձրացած ի քահանայապետութեան՝ յարգանաց և վստահութեան մեծ ցոյցեր կուտար Յիսուսեանց, նոցա յանձնելով աստուածային պաշտաման կարեւոր գործերն ու կարգադրութիւններ:

Պօղոս Գ. մեծ սէր ունէր անոնց նկատմամբ և կը գովէր զանոնք յաճախ, վասն զի հակառակ իւրեանց բազմաշան զբաղմանց և յոգնութեանց ոչ թէ կը տկարանային, այլ օր քան

զօր աւելի կը զօրանային նախանձելի զարգացմամբ:

Պիոս Գ. կը հաստատէ թէ Յիսուսեանք՝ իրենց բարի գործոց համար՝ նախանձու և ասելութեան կողմանէ զբաւարտութեանց կ'ենթարկուին, և թէ թանկագին առանձնաշնորհմանց արժանի են, վասն զի «իւրեքն Յիսուսի անունն կը կրեն նոյնպէս ալ բանիւք և արդեամբք և օրինակաւ կը ջանան իրեն նմանիլ»:

Սուրբ Պիոս Ե. համար Յիսուսեանք բարբարոսաց երկիրներուն մէջ աստուածային բանին սերմանողներն էին և կաթուղիկէ աշխարհի մէջ բազմարդին մշակներ իրենց աստուածապաշտութեամբ, բարի օրինակաւ, սրբութեամբ վարուց, դրախտութեամբ և Ս. Գրոց հմտութեամբ:

Գրիգոր ԺԳ. առելու որ բազմաթիւ համառօտագիրներու և կոնդակներու մէջ կը գովէ զանոնք՝ Յիսուսեանք անխոնջ մշակներ էին Տիրոջ այգւոյն և դիւցազունք որք կը մարտնչէին սատանային յանդգնութեան դէմ հոգեւոր անպարտելի զէնքերով, մեծ բարեկամներ մարդկութեան, զի ոմանք իրենց երկրին մէջ կ'զբաղին պատանեաց կրթութեամբ և դատարարականութեամբ, խորհրդոց մատակարարութեամբ և ուրիշ բարի գործքերով, և այլք՝ կամ մաւոր և վսեմ արքայականք՝ ամենէն անհամբոյր կլիմայից տակ և ամենէն վայրենաբարոյ ցեղերու մէջ կը զոհուին Աւետարանի լոյսն և խոչի քաղաքակրթութիւնն սիւսելով:

Սեքստուս Ե. կը կոչէ զանոնք կըրօնի ծաղկման և անվթար պահպանման յարմարագոյն գործիներ, որք իրաւունք ունին եկեղեցւոյ բարձրագոյն իշխանութեան խնամոց և պաշտպանութեան:

Գրիգոր ԺԳ. որ չչատացաւ միայն համակրութիւն ցոյց տալով, այլ ընդծանր պատժովք արդիւնց ո՛ր և իցէ հակառակութիւն նոցա դէմ, յայտարարելով իսկ թէ ինքն Յիսուսեանց տառապանքներն և վիշտեր եկեղեցւոյ ընդհանուր վնաս կը համարի, ինչպէս նոցա հանգիստն և անդորրութիւնն մեծապէս նպաստաւոր Ս. եկեղեցւոյ:

Կղեմէս Բ. այնքան մեծ համալուծ ունէր Յիսուսի լնկերութեան նկատմամբ, որ չվարանցաւ կոյնել զայն ալ բազուկն Առաքելական Աթոռոյն:

Գրիգոր ԺԵ. կը գովէ գերահռչակ լնկերութիւնները եւ հզօր պաշտպան ուղղափառ Հաւատոյ և իրեր:

Խմտոտուն և քաջալայի մարտիկ ընդդէմ կրօնական մոլորութեանց և ոճիրներու:

Ուրբանոս Բ. զմայրմամբ կը յիշէ Յիսուսեանց եռանդն հոգւոյ իրրկութեան, իրենց սէրն առ Աստուած և առ ընկերն, իրենց գերազանց ձեռնհասութիւնն կրթութեան և դատարարական մասին:

Կղեմէս Ժ. կը գովէ զանոնք իբրեւ արդիւնաշատ անձնաւորութիւններ, հուշակաւ որ իրենց բարեպաշտութեամբ, առաքինութեամբք, ողջմասիտ վարդապետութեամբ, և սրբազան ու արտաքին գիտութեանց զարմանալի յանգրութեամբք:

Բենեդիկտոս ԺԳ. գորովալիք սիրով կը սիրէր զանոնք և կը հուշակէր այն բարիքներն զոր կը անոնք բովանդակ աշխարհի մէջ իրենց առաւել, քարոզութեամբ, օրինակաւ և աստուածախնայանք անխոնջ կրթութեամբ:

Բենեդիկտոս ԺԳ. փառք կը համարի զանոնք Առաքելական Գահին, որ իրեւ աշխատակալ մայր կը հրճուի ի տես այնքան կրօնաւորաց, որք պանծայի հանդիսացան իրենց հատարարիմ կանոնապահութեամբ, առաքինութեամբ, իրենց բազմալայնալի գիտութեամբք և հոգւոյ իրկութեան անխոնջ ու անձնուրաց եռանդեամբ:

Կղեմէս ԺԳ. անխոնջ հաստատած մտութեամբ կը պաշտպանէ զանոնք ընդդէմ օճաքիմ՝ սլաւաբանչաւ չարախօսութեանց: Եւրոպոյ մեծամեծ տէրութեանց թագաւորաց և եպիսկոպոսաց կը յայտնէ անխոնջ սոսկաներու դատաճանութիւններն ընդդէմ բարերար լնկերութեան, և ոչ միայն կը հաստատէ նորա անմեղութիւնն, այլ և կը ջատագովէ զայն իրեւ բարեպաշտ և հանրօգուտ, և իրեւ սուրբ թէ՛ իւր նպատակին, թէ՛ իւր օրինաց և թէ՛ իւր սկզբանց մէջ:

Չափազանց երկար չլինելու համար զանց կ'ընենք դեռ շատ նպատաւոր վկայութիւններ:

Մի կողմանէ տեսնելով այս փառաւոր գովեստներն և միւս կողմանէ գիտնալով Ս. Պապերու նախանձախնդրութիւնն ի յառաջագիւծութիւն և ի պայծառութիւն կաթուղիկէ կրօնի, իւրեքն ենթադրել տակաւին թէ Յիսուսեանք կարենան լինել անարգ և չարագործ տարրեր մարդկութեան մէջ: Եթէ անարգութեան և չարագործութեան ամենաբարձր հետք մ'ըլլար անոնց վրայ, ո՞վ օրիտի բողոքէր ամենէն յառաջ, ո՞վ պիտի արձակէր հզօրագոյն շանթերն նոցա դէմ եթէ ոչ Առաքելական Ս. Աթոռն, որ նոյն իսկ ըստ վկայու-

[illegible]

գարեւաթիւ առկին ին ինքզալ խախ-
մէքոտ օլուալ, տիւնքի կիւն ինն ազար
միւթ տիւքէ օլունամաղը սօյլէնիօրսու-
Աննագ տիւն գառար Ամէրիզալուար պա-
ղը մէվզլէրի ինքալ ին ուղարմըլաւ աղը

Պէ՛ռ յէ՛նէ ի՛թի շէ՛րի՛քէ՛ր , գո՛ւթու՛ղ գո՛ւ-
թու՛ղա կրի՛րդ , ազ՛լամ ե՛մէ՛մէ՛կինտէ՛ն ածի՛րա
հաթա՛ղա կրի՛րմէ՛ղտէ՛ն է՛վէ՛լէ՛ սէ՛յրանա չը-
գան քի՛մսէ՛լէ՛ր կիպի՛ հօ՛ւլաբը՛նա աէ՛վամ ի՛յ-
լէտի՛լէ՛ր ,

(Shymy)

